ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ (1970-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 ԹԹ.)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ
Արաքս Ասատուրի Փաշայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կառլենի Կարապետյան

պ.գ.թ. Մուշեղ Հայկազնի Ղահրիյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. սեպտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին, Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2026թ. օգոստոսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ. գ. թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

20-րդ դարի երկրորդ կեսից Մերձավոր Արևելքում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները՝ նավթարդյունաբերության զարգացումը, ապագաղութացման գործընթացները և նորանկախ պետությունների ինստիտուցիոնալ կայացումը էականորեն վերափոխեցին տարածաշրջանային քաղաքականության բնույթն ու տրամաբանությունը, ինչպես նաև նպաստեցին Պարսից Ծոցի փոքր պետությունների աստիճանական առաջխաղացմանը: Այս համատեքստում առանձնահատուկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում Կատարը, որը 1971 թ. անկախություն ձեռք բերելուց հետո, մեծապես նաև նավթագազային եկամուտների շնորհիվ, համեմատաբար կարճ ժամանակահատվածում կարողացավ ձևավորել արտաքին քաղաքականության բազմաշերտ համակարգ՝ համադրելով միջնորդական առաքելություններն ու հանրային դիվանագիտությունը, տնտեսական ու մարդասիրական աջակցությունը, տեղեկատվական և արտաքին քաղաքական այլ գործիքներ:

Կատարի արտաքին քաղաքականությունը, անցնելով տարբեր շրջափուլերով, նոր թափ ստացավ «արաբական գարնան» իրադարձությունների ժամանակ և դրանից հետո, երբ Դոհան անցում կատարեց առավել ակտիվ, իսկ առանձին դեպքերում, միջամտողական քաղաքականության՝ արաբական աշխարհում քաղաքական վերնախավերի և տարածաշրջանային ուժային հավասարակշռության վերափոխման ակնկալիքով: Այս քաղաքականությունը, մի կողմից, ընդլայնեց Դոհայի տարածաշրջանային և միջազգային դերակատարությունը, մյուս կողմից՝ նպաստեց այն քաղաքական միջավայրի ձևավորմանը, որը հանգեցրեց 2017-2021 թթ. դիվանագիտական ճգնաժամին՝ դառնալով մարտահրավեր Կատարի ինքնիշխանության և արտաքին քաղաքական ինքնուրույնության պահպանման տեսանկյունից:

Թեմայի գիտական կարևորությունն ու արդիականությունը: Կատարի արտաքին քաղաքականության էվոլյուցիան հնարավոր չէ ամբողջականորեն վերլուծել առանց դրա արաբական ուղղության ուսումնասիրության: Անկախության ձեռքբերումից հետո արաբական աշխարհը դարձավ այն առաջնային քաղաքական միջավայրը, որի շրջանակներում ձևավորվեցին Կատարի արտաքին քաղաքականության հիմնարար առաջնահերթությունները, գործիքակազմն ու տարածաշրջանային դերակատարման մոդելը: Այս համատեքստում Կատարը հետևողականորեն զարգացրեց իր արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն՝ ակտիվացնելով ներգրավվածությունը տարածաշրջանային

կազմակերպություններում, աջակցելով պաղեստինյան հիմնախնդրի կարգավորմանը, զարգացնելով միջնորդական դիվանագիտությունը, համագործակցելով «Մուսուլման եղբայրների» հետ, կիրառելով «Ալ Ջազիրան» որպես տեղեկատվական ազդեցության գործիք և ընդլայնելով իր մասնակցությունն ու ազդեցությունը տարածաշրջանային քաղաքական գործընթացներում: Առանց Կատարի արաբական ուղղության համակողմանի ուսումնասիրության անհնար է ոչ միայն առանձնացնել դրա պատմական զարգացման հիմնական փուլերը, այլև բացահայտել այն ներքին օրինաչափություններն ու փոխկապակցվածությունները, որոնք ձևավորել և պայմանավորել են Կատարի արտաքին քաղաքականության զարգացման տրամաբանությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է Կատարի արտաքին քաղաքականության ձևավորման և զարգացման տրամաբանության, դրա հիմնական փուլերի, որոշիչ գործոնների համակարգային վերլուծությամբ և դրանց փոխկապակցվածության բացահայտմամբ: Մեթոդաբանական առումով ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը դիտարկել փուլային զարգացման համատեքստում՝ բացահայտելով դրա հիմնական բաղադրիչների փոխազդեցությունն ու փոխակերպման առանձնահատկությունները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորման, զարգացման և վերափոխման գործընթացը 1971-2021 թթ., վեր հանել դրա պատմական փուլերը, ինչպես նաև գնահատել արաբական ուղղության նշանակությունը Կատարի արտաքին քաղաքականության համակարգման և տարածաշրջանային դերակատարման համատեքստում:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա/ ուսումնասիրել Կատարի պետականության և արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորման պատմաքաղաքական նախադրյալները,

բ/ բացահայտել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացման փուլերն ու դրանց բնորոշ առանձնահատկությունները,

գ/ վեր հանել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության առանցքային հիմնահարցերը, վերլուծել դրանց շրջանակում կիրառված արտաքին քաղաքականության հիմնական գործիքակազմն ու գնահատել դրա արդյունավետությունն ու սահմանափակումները,

դ/ գնահատել «արաբական գարնան» և 2017 թ. Կատարի դիվանագիտական ճգնաժամի ազդեցությունը Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության փոխակերպումների վրա,
ե/ բացահայտել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության դերն ու նշանակությունը երկրի արտաքին քաղաքականության պատմական զարգացման համատեքստում:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1971-2021 թվականները՝ Կատարի անկախության հռչակումից մինչև 2021 թ. դիվանագիտական ճգնաժամի հաղթահարումը: Ընտրված ժամանակաշրջանը հնարավորություն է տալիս վեր հանել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության պատմական զարգացման հիմնական փուլերը և գնահատել դրանք: Միաժամանակ, Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ակունքներն ամբողջական ներկայացնելու նպատակով ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվել նաև անկախությանը նախորդող ժամանակաշրջանին, մասնավորապես՝ Ալ Թանիների իշխանության ամրապնդմանը, Կատարի՝ որպես առանձին քաղաքական միավորի կայացմանը և անկախացմանը նախորդած առանցքային պատմաքաղաքական գործընթացներին:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության առանցքային մեթոդներից է պատմական փուլայնացման մեթոդը (անգլ.՝ historical periodization method), որի կիրառումը հնարավորություն է տվել վեր հանել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացման հիմնական փուլերը, բացահայտել տարածաշրջանային քաղաքական զարգացումների և Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության վերափոխումների միջև առկա պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև Կատարի արտաքին քաղաքական գործիքակազմի և տարածաշրջանային դերակատարման փոփոխությունները 1971-2021 թվականներին: Պատմահամեմատական մեթոդի (անգլ.՝ historical comparative method) կիրառմամբ համեմատվել են Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացման տարբեր փուլերին բնորոշ արտաքին քաղաքական վարքագիծը, առաջնահերթությունները, կիրառված գործիքակազմն ու տարածաշրջանային դերակատարության առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Սկզբնաղբյուրների ուսումնասիրության համար կիրառվել է որակական բովանդակային վերլուծության (անգլ.՝ qualitative content analysis) մեթոդը:

Ատենախոսության տեսական և հայեցակարգային հիմքերը: Հետազոտության տեսական և հայեցակարգային հիմքում փոքր պետությունների արտաքին քաղաքականության վերաբերյալ մի քանի տեսություններ ու հայեցակարգային մոտեցումներ են, որոնց միջոցով մեկնաբանվել են Կատարի արտաքին քաղաքական վարքագիծը, արտաքին քաղաքական ազդեցության ձևավորման մեխանիզմները և տարածաշրջանային դերակատարման առանձնահատկությունները: Հետազոտության տեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում «կառուցվածքային ռեալիզմը», որի հիմնադրույթները թույլ են տալիս մեկնաբանել փոքր պետությունների արտաքին քաղաքականության ձևավորումը՝ միջազգային համակարգի կառուցվածքային սահմանափակումների, ուժային հարաբերակցության և անվտանգային միջավայրի համատեքստում: Այդ տեսության շրջանակում կիրառվել են նաև «հավասարակշռման» (անգլ.՝ balancing), «ուժեղին հարելու» (անգլ.՝ bandwagoning) և «ինքնաապահովագրման ու ռիսկերի բաշխման» (անգլ.՝ hedging) ռազմավարությունների վերաբերյալ մոտեցումները, որոնք կարևոր նշանակություն ունեն Կատարի արտաքին քաղաքական վարքագծի մեկնաբանման համար: Կատարի տարածաշրջանային և միջազգային դերակատարման վերլուծության համար կիրառվել է նաև Կ. Հոլսթիի «դերի տեսությունը» (անգլ.՝ role theory), որը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես են պետությունները ստանձնում և իրագործում իրենց միջազգային դերերը՝ պայմանավորված ինչպես սեփական ինքնաընկալմամբ, այնպես էլ՝ արտաքին դերակատարների ակնկալիքներով և այդ դերերի միջազգային ճանաչմամբ: Միաժամանակ, Կատարի արտաքին քաղաքական ազդեցության ձևավորման առանձին դրսևորումներ մեկնաբանելու համար կիրառվել է Ռ. Զուպանչիչի «նորմատիվ ուժի» (անգլ.՝ normative power) հայեցակարգային մոտեցումը: Ոչ պետական դերակատարների միջոցով Կատարի արտաքին քաղաքական ազդեցության ընդլայնման մեխանիզմները հասկանալու համար կիրառվել է Դ. Գալեևայի «վարձակալված ուժի» (անգլ.՝ rented power) հայեցակարգը: Հետազոտության հայեցակարգային հիմքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Մ. Կամրավայի առաջադրած «նուրբ ուժի» (անգլ.՝ subtle power) հայեցակարգը, քանի որ այն մշակվել է հատուկ Կատարի արտաքին քաղաքականության ֆենոմենը մեկնաբանելու համար: «Արաբական գարնանը» հաջորդած ժամանակաշրջանում Կատարի արտաքին քաղաքականության վերափոխումը ցույց տալու համար կիրառվել է Մ. Մերինգթոնի առաջադրած «ուշ նուրբ ուժի» (անգլ.՝ late subtle power) հայեցակարգը, որը վերանայում և զարգացնում է Կամրավայի մոտեցումը՝ այն

հարմարեցնելով «արաբական գարնան» իրադարձություններից հետո ձևավորված նոր տարածաշրջանային իրողություններին:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում առաջին անգամ իրականացվել է Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության համակարգված և համալիր քննություն: Մեկ ամբողջական պատմաքաղաքական ուսումնասիրության շրջանակներում առաջարկվել է փուլայնացնել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը՝ վերլուծելով յուրաքանչյուր շրջափուլին բնորոշ առանձնահատկությունները: Միասնական վերլուծական շրջանակում քննության են ենթարկվել առանձին հակամարտություններում Կատարի միջնորդական գործունեությունը, պաղեստինյան քաղաքականությունը, ոչ պետական, այդ թվում՝ «քաղաքական իսլամին» հարող դերակատարների հետ հարաբերությունները, տեղեկատվական դիվանագիտությունը, մարդասիրական և ներդրումային քաղաքականությունը՝ դրանք դիտարկելով որպես նույն արտաքին քաղաքական կառուցակարգի փոխկապակցված բաղադրիչներ: Մեկ միասնական հետազոտության շրջանակում համադրվել են Կատարի արտաքին քաղաքականության վերաբերյալ Մ. Կամրավայի «նուրբ ուժի», Դ. Գալեևայի «վարձակալված ուժի» և Մ. Մերինգթոնի «ուշ նուրբ ուժի» հայեցակարգերը՝ Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության պատմական քննության նպատակով:

Գիտական վարկած

Սույն ատենախոսությունն առաջարկում է Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության պատմաքաղաքական ուսումնասիրման նոր հայեցակարգային մոտեցում, որի համաձայն՝ արաբական ուղղությունը Կատարի արտաքին քաղաքականության համակարգաստեղծ առանցքն է, որի շուրջ ձևավորվել և զարգացել են երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունները, ռազմավարական գործընկերությունները, ազդեցության գործիքները և ոչ պետական դերակատարների ներգրավման մեխանիզմները՝ ապահովելով Կատարի արտաքին քաղաքականության տարբեր ուղղությունների փոխկապակցվածությունն ու ծառայեցումը նրա տարածաշրջանային դերակատարության ամրապնդմանը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են օգտակար լինել փոքր պետությունների արտաքին քաղաքականության և նրանց տարածաշրջանային դերակատարության վերաբերյալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար: Միևնույն ժամանակ, ատենախոսությունը կարող է իր ներդրումն ունենալ Հայաստանում նոր ձևավորվող

կատարագիտության կայացման և զարգացման գործում՝ լրացնելով Կատարի արտաքին քաղաքականության վերաբերյալ հայալեզու գիտական հետազոտությունների առկա բացը: Հետազոտության արդյունքները կարող են գործնական նշանակություն ունենալ արտաքին քաղաքականության, տարածաշրջանային անվտանգության և Մերձավոր Արևելքի հիմնահարցերով զբաղվող պետական կառույցների, վերլուծական կենտրոնների և հետազոտական հաստատությունների համար՝ Կատարի արտաքին քաղաքականության, արաբական երկրների քաղաքական գործընթացների և Պարսից ծոցի տարածաշրջանային զարգացումների վերլուծության նպատակով:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել Արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժինը: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլվել են ՀՀ ԲԿԳԿ-ի գրախոսվող գիտական պարբերականներում տպագրված հոդվածներում, ինչպես նաև ներկայացվել են միջազգային գիտաժողովներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը և գրականության տեսություն: Ատենախոսությունը շարադրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն և արաբերեն լեզուներով սկզբնաղբյուրների, մասնագիտական գրականության և վերլուծական նյութերի համակողմանի ուսումնասիրության հենքի վրա: Արդյունքում, համադրական վերլուծությունը հնարավորություն է տվել նշված ժամանակագրական սահմաններում համակողմանիորեն բացահայտել Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, վեր հանել դրա առանցքային հիմնահարցերը, վերլուծել արտաքին քաղաքական գործիքակազմի էվոլյուցիան և գնահատել տարածաշրջանային ու միջազգային գործընթացների ազդեցությունն այդ ուղղության վրա: Աղբյուրագիտական հիմքի կարևոր բաղադրիչ են պաշտոնական փաստաթղթերն ու հրապարակումները, ինչպես նաև Կատարի կառավարող ընտրանու և բարձրաստիճան պաշտոնատար անձանց ելույթներն ու հայտարարությունները, որոնց համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել վերլուծել պաշտոնական Դոհայի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ռազմավարությունն ու տեսլականը, առանձին խնդիրների վերաբերյալ դիրքորոշումները, բացահայտել արտաքին քաղաքական առաջնահերթությունների ձևավորման ներքին տրամաբանությունն ու զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը

Կատարի արաբական քաղաքականության ձևավորման ու իրականացման վրա[1]: Աղբյուրագիտական նշանակություն ունեն միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների բանաձևերը, հայտարարությունները, զեկույցներն ու արխիվային փաստաթղթերը, որոնք հնարավորություն են տվել ուսումնասիրելու Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորման համար կարևոր տարածաշրջանային և միջազգային իրողությունները, ինչպես նաև գնահատելու Դոհայի ներգրավվածությունը բազմակողմ դիվանագիտական և հակամարտությունների կարգավորման գործընթացներում[2]: Քաղաքական

[1] Ministry of Foreign Affairs of the State of Qatar, "Qatar Participates in 48th Session of the Council of Foreign Ministers of OIC", 2022, https://mofa.gov.qa/en/qatar/latest-articles/latest-news/details/1443/08/19/qatar-participates-in-48th-session-of-the-council-of-foreign-ministers-of-oic, [դիտվել է 01.11.2025]; Ministry of Foreign Affairs of the State of Qatar. "Qatar Pledges $1 Billion for Gaza Reconstruction at Cairo Conference," October 12, 2014, https://mofa.gov.qa/en/qatar/latest-articles/latest-news/details/2014/10/12/qatar-provides-$1-billion-for-gaza-reconstruction, [դիտվել է 01.09.2025]; Qatar News Agency, "Foreign Minister Denies Meshaal Departure from Qatar", January 12, 2015, https://www.qna.org.qa/en/News-Area/News/2015-01/12/foreign-minister-denies-meshaal-departure-from-qatar, [դիտվել է 01.11.2025]; The Amiri Diwan of the State of Qatar, "Sheikh Khalifa Bin Hamad Al Thani," https://www.diwan.gov.qa/about-qatar/qatars-rulers/sheikh-khalifa-bin-hamad-al-thani?sc_lang=en, [դիտվել է 02.02.2023]; The Amiri Diwan of the State of Qatar, "The Permanent Constitution of the State of Qatar," https://www.diwan.gov.qa/about-qatar/constitution?sc_lang=en, [դիտվել է 02.02.2023]; The Amiri Diwan of the State of Qatar, "His Highness Speech at the Opening of the 24th Advisory Council Session," November 14, 1995. https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/1995/nov/14/24th-advisory-council-session, [դիտվել է 01.11.2025]; The Amiri Diwan of the State of Qatar, "His Highness Speech at Georgetown University." June 14, 1997, https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/1997/jun/14/georgetown-university-washington, [դիտվել է 01.11.2025]; The Amiri Diwan of the State of Qatar. "His Highness Speech on the Occasion of His Abdication of Power," June 25, 2013, https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/2013/jun/25/on-the-occasion-of-his-abdication-of-power, [դիտվել է 01.09.2025]; The Amiri Diwan of the State of Qatar, "The Inaugural Speech of HH The Amir," June 26, 2013, https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/2013/june/26/the-inaugural-speech-of-hh-the-amir, [դիտվել է 01.11.2025]; The Amiri Diwan of the State of Qatar, "His Highness Speech at the Opening Session of the 24th Arab Summit," March 26, 2013, https://www.diwan.gov.qa/ar-qa/briefing-room/speeches-and-remarks/2013/march/26/opening-session-of-the-24th-arab-summit?sc_lang=en, [դիտվել է 01.11.2025].

[2] United Nations General Assembly, *Resolution 181 (II): Future Government of Palestine*, November 29, 1947, *United Nations Resolutions on Palestine and the Arab-Israeli Conflict*, https://www.un.org/unispal/document/auto-insert-185393/, [դիտվել է 01.11.2025]; United Nations Security Council, *Resolution 598 (1987)*, S/RES/598 (1987), July 20, 1987, United Nations Digital Library, https://digitallibrary.un.org/record/137345, [դիտվել է 01.11.2025]; Saudi Arabia, Permanent Mission to the United Nations, *Letter Dated 27 June 1994 from the Permanent Representative of Saudi Arabia to the United Nations Addressed to the Secretary-General*, June 27, 1994, United Nations Digital Library, https://digitallibrary.un.org/record/190113?v=pdf, [դիտվել է 01.11.2025];

գործընթացների և զարգացումների տեղեկատվական համատեքստը բացահայտելու համար օգտագործվել են միջազգային և տարածաշրջանային մամուլի հրապարակումներ ու վերլուծություններ[3]: Ոչ պակաս կարևոր են Մերձավոր Արևելքի

Qatar, Permanent Mission to the United Nations, *Letter Dated 24 December 1998 from the Permanent Representative of Qatar to the United Nations Addressed to the President of the Security Council*, UN Doc. S/1998/1228, December 24, 1998, United Nations Digital Library, https://digitallibrary.un.org/record/267130?v=pdf, [դիտվել է 01.11.2025]; League of Arab States, *Declaration of the Arab Summit Conference at Algiers*, November 28, 1973, Government of Israel Archives, https://www.gov.il/en/pages/19-declaration-of-the-arab-summit-conference-at-algiers-28-november-1973, [դիտվել է 01.11.2025].

[3] Al Jazeera, "Qatar Brokers Yemen Peace Deal," February 1, 2008. https://www.aljazeera.com/news/2008/2/1/qatar-brokers-yemen-peace-deal, [դիտվել է 01.11.2025]; Al Jazeera, "Profile: Yemen's Houthi Fighters," August 12, 2009, https://www.aljazeera.com/news/2009/8/12/profile-yemens-houthi-fighters, [դիտվել է 01.11.2025]; Reuters, "Yemen Officials, Rebels Reach Peace Deal in Qatar," August 27, 2010, https://www.reuters.com/article/world/yemen-officials-rebels-reach-peace-deal-in-qatar-idUSTRE67Q39T/, [դիտվել է 01.11.2025]; Reuters, "Egypt Returns $2 Billion to Qatar in Sign of Growing Tensions," September 19, 2013, https://www.reuters.com/article/world/egypt-returns-2-billion-to-qatar-in-sign-of-growing-tensions-idUSBRE98I0VA/, [դիտվել է 01.11.2025]; McDowall A.; Bakr A., "Three Gulf Arab States Recall Envoys in Rift with Qatar," Reuters, March 5, 2014, https://www.reuters.com/article/world/three-gulf-arab-states-recall-envoys-in-rift-with-qatar-idUSBREA2413N/, [դիտվել է 01.11.2025]; The New York Times, "Qatar Says Saudis Seized Its Border Post," October 2, 1992, https://www.nytimes.com/1992/10/02/world/qatar-says-saudis-seized-its-border-post.html, [դիտվել է 01.11.2025]; The New York Times, "Hussein Visiting Cairo for Talks; Arrives for Reconciliation with Sadat," September 11, 1973, https://www.nytimes.com/1973/09/11/archives/hussein-visiting-cairo-for-talks-arrives-for-reconciliation-with.html, [դիտվել է 01.11.2025]; Wintour P., "Donald Trump Tweets Support for Blockade Imposed on Qatar," The Guardian, June 6, 2017. https://www.theguardian.com/world/2017/jun/06/qatar-panic-buying-as-shoppers-stockpile-food-due-to-saudi-blockade, [դիտվել է 01.11.2025]; Wintour P., "Qatar Given 10 Days to Meet 13 Sweeping Demands by Saudi Arabia," The Guardian, June 23, 2017, https://www.theguardian.com/world/2017/jun/23/close-al-jazeera-saudi-arabia-issues-qatar-with-13-demands-to-end-blockade, [դիտվել է 01.11.2025]; BBC News, "Qatar Crisis: What You Need to Know," July 19, 2017, https://www.bbc.com/news/world-middle-east-40173757, [դիտվել է 01.11.2025]; BBC News, "Qatar Says State News Agency Hacked after Report Cites Emir Criticising U.S," May 24, 2017, https://www.bbc.com/news/world-middle-east-40026822, [դիտվել է 01.11.2025]; Sciutto J.; Herb J., "Exclusive: The Secret Documents That Help Explain the Qatar Crisis," CNN Politics, July 11, 2017, https://edition.cnn.com/2017/07/10/politics/secretdocuments-qatar-crisis-gulf-saudi/index.html, [դիտվել է 01.11.2025]; Bin Sallam M., "Government, Houthis Make Concessions to End Ongoing War," Yemen Times, February 18, 2008, https://yementimes.com/government-houthis-make-concessions-to-end-ongoing-war-archives2008-1130-front-page/, [դիտվել է 01.11.2025]; Laghmari J., "Qatar Giving

քաղաքական գործընթացներն ուսումնասիրող հեղինակավոր հետազոտական կենտրոնների զեկույցները, որոնք հնարավորություն են տվել պաշտոնական փաստաթղթերը համադրել փորձագիտական գնահատականների հետ՝ բազմակողմանի կերպով մեկնաբանելով տարածաշրջանային զարգացումները[4]:

Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության առանձնահատկությունները, զարգացման դինամիկան և առանցքային հիմնահարցերը բացահայտելու համար կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն սկզբնաղբյուրային նյութերը, այլև՝ մասնագիտական գրականությունը (մենագրություններ, գիտական հոդվածներ և ժողովածուներ): Կատարի պետականության ձևավորման, Ալ Թանիների իշխանության ամրապնդման և Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության վաղ պատմական նախադրյալների ուսումնասիրության համար կարևոր հիմք են Ռոզմարի Սայիդ Զահլանի[5], Մենդի Մորթոնի[6] մենագրությունները, իսկ Ալեն Ֆրոմհերցի[7] աշխատությունը հնարավորություն է տալիս Կատարի պատմությունը դիտարկել երկարաժամկետ զարգազման մեջ: Դեյվիդ Ռոբերտսի[8] և Ջեյմս Դորսիի[9]

Tunisia $1 Billion Loan, May Provide Jobs," Bloomberg, April 26, 2012, https://www.bloomberg.com/news/articles/2012-04-26/qatar-giving-tunisia-1-billion-loan-may-provide-jobs, [դիտվել է 01.11.2025].

[4] Al Achi A., *How Syrian Civil Society Lost Its Independence in a War of Conflicting Agendas*, Carnegie Middle East Center, May 15, 2020, https://carnegie-mec.org/2020/05/15/how-syrian-civil-society-lost-its-independence-in-war-of-conflicting-agendas-pub-81802, [դիտվել է 18.05.2024]; Kabalan M., "Actors, Structures and Qatari Foreign Policy," Arab Center Washington DC, February 10, 2020, https://arabcenterdc.org/resource/actors-structures-and-qatari-foreign-policy/,[դիտվել է 15.04.2021]; Gurbuz M., "Turkey and the Gulf Crisis: Erdoğan's Most Difficult Game," Arab Center Washington DC, June 19, 2017, https://arabcenterdc.org/resource/turkey-gulf-crisis/, [դիտվել է 15.04.2024]; Barakat S., *Qatari Mediation: Between Ambition and Achievement*, Brookings Doha Center Analysis Paper, no. 12, Doha, Brookings Doha Center, November 2014, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/Final-PDF-English.pdf, [դիտվել է 15.04.2024]; Cherif Y., "Tunisia's Fledgling Gulf Relations," Carnegie Endowment for International Peace, January 2017, https://carnegieendowment.org/sada/2017/01/tunisias-fledgling-gulf-relations-pub-67811, [դիտվել է 15.04.2024]; International Crisis Group, *A Time for Talks: Toward Dialogue between the Gulf Arab States and Iran*, Middle East Report no. 226, Brussels, International Crisis Group, August 24, 2021, https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran-united-arab-emirates-saudi-arabia-qatar, [դիտվել է 15.05.2024].

[5] Zahlan R. S., *The Creation of Qatar*, London, Croom Helm, 1979.

[6] Morton M. Q., *Masters of the Pearl: A History of Qatar*, Reaktion Books, London, 2020.

[7] Fromherz A. J., *Qatar: A Modern History*, Washington DC, Georgetown University Press, 2012.

[8] Roberts D. B., "Understanding Qatar's Foreign Policy Objectives", Mediterranean Politics, vol. 17, no. 2, 2012, pp. 233-239.

[9] Dorsey J., *The Turbulent World of Middle East Soccer*, Singapore: Palgrave Macmillan, 2016.

աշխատությունները մեծապես նպաստել են Կատարի արտաքին քաղաքական նպատակների բացահայտմանը: Կատարում և Պարսից ծոցի մյուս միապետություններում հատկապես «Մուսուլման եղբայրների» ազդեցության ուսումնասիրության համար նշանակալի է Քորթնի Ֆրիրի աշխատությունը[10], որը հնարավորություն է տալիս բացահայտելու, թե ինչպես է Կատարը գործիքայնացրել «քաղաքական իսլամն» արտաքին քաղաքականության մեջ: «Արաբական գարունը» և Կատարի դիվանագիտական ճգնաժամն ընդգրկող հետազոտությունների շարքում հատկապես նշանակալի են Քրիստիան Քոութս Ուլրիխսենի[11], Լինա Խատիբի[12] աշխատությունները: Մեհրան Կամրավայի[13], Դիանա Գալեևայի[14], Մեթյու Մերինգթոնի[15] աշխատությունները հնարավորություն են տվել բացահայտելու Կատարի արտաքին քաղաքականության զարգացման հիմնական միտումներն ու առանձնահատկությունները, «նուրբ ուժի», «վարձակալված ուժի» և «ուշ նուրբ ուժի» հայեցակարգերի էվոլյուցիան: Մասնավորապես, Կամրավայի աշխատությունը ներկայացնում է Կատարը որպես փոքր, բայց ակտիվ արտաքին քաղաքականություն վարող պետություն: Աշխատության մեջ Կամրավայի առաջադրած «նուրբ ուժի» հայեցակարգը կարևոր տեսական հիմք է Կատարի արտաքին քաղաքական ազդեցության մեխանիզմները հասկանալու տեսանկյունից: Դ. Գալեևայի մենագրությունը կարևոր է Կատարի արտաքին քաղաքականության մեջ ոչ պետական դերակատարների նշանակությունը հասկանալու համար: Նրա առաջադրած «վարձակալված ուժի» հայեցակարգը բացատրում է, թե ինչպես է Կատարը ոչ պետական դերակատարների հեղինակությունն օգտագործելով ընդլայնել իր ազդեցությունը, անդրազգային կապերը, սոցիալական ազդեցությունն ու քաղաքական ցանցերը: Այս մոտեցումը հատկապես կարևոր է «քաղաքական իսլամի», «Ալ Ջազիրայի» և միջնորդական դիվանագիտության վերլուծության տեսանկյունից: Մ. Մերինգթոնի աշխատությունը հատուկ նշանակություն ունի Կամրավայի «նուրբ ուժի» հայեցակարգի հետագա տեսական զարգացման

---

[10] Freer C., "Rentier Islamism in the Absence of Elections: The Political Role of Muslim Brotherhood Affiliates in Qatar and the United Arab Emirates", *International Journal of Middle East Studies*, vol. 43, no. 3, 2017, pp. 479-500.

[11] Ulrichsen K. C., *Qatar and the Arab Spring,* New York, Oxford University Press, 2014; Ulrichsen K. C., *Qatar and the Gulf Crisis,* New York, Oxford University Press, 2020.

[12] Khatib L., "Qatar's Foreign Policy: The Limits of Pragmatism," *International Affairs*, vol. 89, no. 2, 2013, pp. 417-431.

[13] Kamrava M., *Qatar: Small State, Big Politics*, Ithaca, NY, Cornell University Press, 2013.

[14] Galeeva D., *Qatar: The Practice of Rented Power*, London and New York, Routledge, 2022.

[15] Merrington M., *Qatar's Pursuit of Autonomy: The Annals of Qatar-Saudi Relations*, Singapore, Palgrave Macmillan, 2026.

տեսանկյունից: Նրա առաջադրած «ուշ նուրբ ուժի» հայեցակարգը հնարավորություն է տալիս բացատրելու, թե ինչպես «արաբական գարնան» դեպքերից հետո Կատարի արտաքին քաղաքականությունը դարձավ առավել մրցակցային, երբեմն նաև՝ միջամտողական:

Ատենախոսության մեջ քննվող մի շարք հարցերի, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի տարածաշրջանային գործընթացների, արաբական երկրների պատմական զարգացման, Պարսից ծոցի տարածաշրջանային հարաբերությունների, «քաղաքական իսլամի», ինչպես նաև պաղեստինյան հիմնախնդրի և «արաբական գարնան» իրադարձությունների լուսաբանման համար կարևոր նշանակություն են ունեցել հայ արևելագետներ Նիկոլայ Հովհաննիսյանի[16], Ռուբեն Կարապետյանի[17], Արաքս Փաշայանի[18] և այլ հեղինակների ուսումնասիրությունները:

Հարկ է նշել, որ օգտագործված գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա հետազոտությունների գերակշիռ մասը նվիրված է Կատարի արտաքին քաղաքականության առանձին դրսևորումներին կամ արտաքին քաղաքականության գործիքակազմի առանձին տարրերին: Մինչդեռ Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը որպես ինքնուրույն, ամբողջական և պատմական զարգացման տրամաբանություն ունեցող համակարգ առ այսօր չի դիտարկվել որպես առանձին համալիր ուսումնասիրության առարկա:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: **Ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են առարկան, նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը, ինչպես նաև հետազոտական

[16] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005 թթ.), հատ. 3, Երևան, Զանգակ-97, 2006:

[17] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019:

[18] Փաշայան Ա., «Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը», «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 3, 2011; Փաշայան Ա., «Քաղաքական իսլամը Արաբական գարնան համատեքստում», Ժամանակակից Եվրասիա, հատ. 3, Երևան, 2014, էջ 29-39; Pashayan A., Saudi Arabia-Qatar: From Cooperation to Confrontation, *Contemporary Eurasia*, vol. VII, nos. 1-2, pp. 80-89, 2018.

թեմայի աղբյուրագիտական հիմքն ու գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **«Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորումը»**, գլխում ուսումնասիրվում են Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորման տեսական, պատմական և քաղաքական հիմքերը: Ներկայացվում է հետազոտության տեսական և հայեցակարգային հիմքերը և դրանց կիրառելիությունը՝ Կատարի արտաքին քաղաքական վարքագծի, ազդեցության ձևավորման մեխանիզմների և արաբական աշխարհում նրա դերակատարման առանձնահատկությունների բացահայտման նպատակով: Վերլուծության են ենթարկվում Կատարի անկախ պետականության ձևավորման պատմաքաղաքական նախադրյալները, Կատարի պետականակերտման գործընթացն ու դրա վրա ներազդած ներքին և արտաքին գործոնները, որոնք կանխորոշեցին արաբական ուղղության առաջնային նշանակությունը երկրի արտաքին քաղաքականության ձևավորման սկզբնական փուլում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացումը 1990-ականներին»**, գլխում ներկայացվում են այն քաղաքական, անվտանգային և գաղափարական գործընթացները, որոնք 1990-ականներին պայմանավորեցին Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացումը: Գնահատվում է 1990 թ. Պարսից ծոցի ճգնաժամի ազդեցությունը Կատարի արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերանայման և ԱՄՆ-ի հետ ռազմավարական համագործակցության խորացման վրա, ի ցույց է դրվում, որ հենց այս ժամանակաշրջանը դարձավ Կատարի արտաքին քաղաքականության զարգացման որակապես նոր փուլի մեկնակետը: Վերլուծվում են շեյխ Համադ բին Խալիֆա Ալ Թանիի (1995-2013 թթ.) իշխանության գալուց հետո Կատարի արտաքին քաղաքականության զարգացման հիմնական գործընթացները՝ Սաուդյան Արաբիայի ազդեցությունից աստիճանական հեռացումը, էներգետիկ և տնտեսական ռեսուրսների արտաքին քաղաքական ազդեցության գործիքայնացումը, ինչպես նաև տարածաշրջանում առավել ինքնուրույն դերակատարության ձևավորումը: Այդ համատեքստում քննության են առնվում «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության ստեղծումը՝ որպես տեղեկատվական ազդեցության առանցքային գործիք, ինչպես նաև ԱՄՆ-Կատար ռազմավարական համագործակցության դերը Կատարի արտաքին քաղաքականության զարգացման և տարածաշրջանային ազդեցության ընդլայնման գործընթացում: Վերլուծվում է Կատարի պաղեստինյան

քաղաքականությունը 1990-ականներին՝ ցույց տալով, թե ինչպես պաղեստինյան հիմնախնդիրը վերածվեց Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության առանցքային հիմնահարցերից մեկի: Բացահայտվում են նաև պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացում Կատարի միջնորդական դերակատարման նախադրյալները: Վերլուծության է ենթարկվում Կատարում «Մուսուլման եղբայրներ» շարժման անդամների հաստատվելուց հետո «քաղաքական իսլամի» ներթափանցման սկզբնական գործընթացը, ինչպես նաև «քաղաքական իսլամի»՝ Կատարի արտաքին քաղաքական ազդեցության գործիքակազմում ներառվելու նախադրյալները:

Ատենախոսության երրորդ՝ **«Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը 2000-ականների սկզբին»**, գլխում ուսումնասիրվում է Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության անցումը զարգացման նոր՝ առավել ակտիվ և նախաձեռնողական փուլ, որի առանցքային դրսևորումը միջնորդական առաքելություններն էին: Միջնորդական գործունեությունը դարձավ Դոհայի արտաքին քաղաքականության արաբական ուղղության առանցքային գործիքներից մեկը, որը հնարավորություն տվեց ամրապնդել երկրի տարածաշրջանային հեղինակությունն ու քաղաքական կշիռը միջազգային հարթակներում: Լիբանանի, Սուդանի և Եմենի հակամարտությունների դեպքային ուսումնասիրությունների հիման վրա բացահայտվում են Կատարի միջնորդական քաղաքականության հիմնական շարժառիթները, դրսևորման ձևերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատվում են դրանց արդյունավետությունն ու սահմանափակումները: Լուսաբանվում է Կատարի պաղեստինյան քաղաքականության հետագա զարգացումը: Վերլուծության են ենթարկվում Դոհայի նախաձեռնություններն իսրայելապաղեստինյան հակամարտության կարգավորման, ներպաղեստինյան երկխոսության և հաշտեցման գործընթացներում, ինչպես նաև գնահատական է տրվում դրանց նշանակությանը Կատարի տարածաշրջանային դերակատարման և արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացման համատեքստում:

Ատենախոսության չորրորդ՝ **«Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության կերպափոխումները 2011-2021 թթ.»**, գլխում ուսումնասիրվում են «արաբական գարնան» հետևանքով Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության փոխակերպումները: Վերլուծվում է Դոհայի անցումը հարաբերականորեն չեզոք միջնորդությունից դեպի առավել բացահայտ՝ նախաձեռնողական, իսկ որոշ դեպքերում՝ միջամտողական քաղաքականություն, որի շրջանակում տեղեկատվական, դիվանագիտական,

տնտեսական, և առանձին դեպքերում, ռազմական գործիքներն ուղղվեցին արաբական պետությունների ներքաղաքական իրավիճակի վերափոխմանը, գործող ընտրանիների հեռացմանը, տարածաշրջանային ուժային հարաբերակցության վերաձևավորմանը և Կատարի ազդեցության ընդլայնմանը: Եգիպտոսի, Եմենի, Լիբիայի, Թունիսի, Սիրիայի և Բահրեյնի իրադարձությունների հիման վրա բացահայտվում են Կատարի արտաքին քաղաքականության տարբերակված դրսևորումները՝ հեղափոխական և իսլամիստական ուժերի քաղաքական, տեղեկատվական ու ֆինանսական աջակցությունից մինչև ուղղակի ռազմական ներգրավվածություն: Միաժամանակ գնահատվում են այդ քաղաքականության հակասական և ոչ միանշանակ բնույթն ու իրականացման հետ կապված սահմանափակումներն ու խնդրահարույց կողմերը՝ ցույց տալով, որ Դոհայի միջամտողական քաղաքականությունը թուլացրեց նրա՝ որպես հարաբերականորեն չեզոք միջնորդի հեղինակությունը և խորացրեց հակասությունները Ծոցի արաբական միապետությունների և նրանց դաշնակիցների հետ:

Քննության է առնվում Կատարի արտաքին քաղաքականության վերափոխումը Թամիմ բին Համադ Ալ Թանիի կառավարման տարիներին՝ սկսած 2013 թվականից, արտաքին քաղաքական հիմնական հավակնությունների պահպանման և դրանց իրականացման մեխանիզմների վերանայման համատեքստում: Վերլուծվում են «արաբական գարնան» ընթացքում Դոհայի վարած քաղաքականության հետևանքները և Սաուդյան Արաբիայի և նրա դաշնակիցների հետ հակասությունների խորացումը: Ներկայացվում են 2017-2021 թթ. Կատարի դիվանագիտական ճգնաժամի քաղաքական նախադրյալները, ընթացքն ու հաղթահարման մեխանիզմները: Վերլուծվում է այդ պայմաններում Դոհայի որդեգրած քաղաքականությունը՝ ուղղված պետական ինքնիշխանության պահպանմանը, տնտեսական կախվածությունների նվազեցմանը և արտաքին քաղաքական կապերի դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև գնահատվում է դիվանագիտական ճգնաժամի նշանակությունը երկրի արտաքին քաղաքականության կենսունակության դրսևորման տեսանկյունից:

Եզրակացության մեջ հանգել ենք հետևյալ վերջնարդյունքին.

Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության ձևավորումը խորապես պայմանավորված էր անկախությանը նախորդած պատմաքաղաքական զարգացումներով, որոնք վճռորոշ ազդեցություն են թողել երկրի պետականաշինության, քաղաքական ինքնության և արտաքին քաղաքական առաջնահերթությունների հետագա բյուրեղացման վրա: Անկախությանը հաջորդած ժամանակահատվածում Կատարի արտաքին քաղաքականության գլխավոր

խնդիրներն էին՝ միջազգային ճանաչման ապահովումը, ինքնիշխանության ամրապնդումը և հարաբերականորեն ինքնուրույն արտաքին քաղաքկանության ձևավորումը: Դրանով պայմանավորված՝ Դոհան առաջնահերթ ուշադրություն դարձրեց արաբական պետությունների, և տարածաշրջանային արաբական ու միջազգային իսլամական կազմակերպությունների հետ հարաբերությունների զարգացմանը՝ արաբական աշխարհը դիտարկելով որպես իր արտաքին քաղաքականության ռազմավարական առանցք: Արաբական քաղաքական ուղենիշի ձևավորումը պայմանավորված էր ինչպես պատմամշակութային և քաղաքակրթական ընդհանրություններով, այնպես էլ՝ նորաստեղծ պետության անվտանգության ապահովման և քաղաքական շահերի իրացման անհրաժեշտությամբ:

Կատարի արտաքին քաղաքականության վերաբերյալ Մ. Կամրավայի «նուրբ ուժի», Դ. Գալեևայի «վարձակալված ուժի» և Մ. Մերինգթոնի «ուշ նուրբ ուժի» հայեցակարգերի համադրումը հնարավորություն է տվել բացահայտելու Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացման տրամաբանությունը, որը դրսևորվել է այդ ուղղության առաջնահերթությունների և տարածաշրջանային դերակատարության փոփոխությամբ, ինչպես նաև քաղաքական ազդեցության գործիքների փոխակերպմամբ և դրանց փոխկապակցված կիրառմամբ:

Պատմական փուլայնացման մեթոդի կիրառմամբ պարզ է դառնում, որ 1971-2021 թթ. Կատարի Պետության արտաքին քաղաքականության արաբական ուղղության զարգացումն անցել է երեք հիմնական փուլ: Առաջին փուլը (1971-1994 թթ.) բնութագրվում էր արտաքին քաղաքականության ինստիտուցիոնալ ձևավորմամբ, տարածաշրջանային քաղաքական համակարգերին ինտեգրմամբ և հարաբերական ինքնուրույն արտաքին քաղաքականության հիմքերի ստեղծմամբ: Երկրորդ փուլը (1995-2010 թթ.) նշանավորվեց Համադ բին Խալիֆա Ալ Թանիի իշխանության գալուց հետո նախաձեռնողական և բազմավեկտոր արտաքին քաղաքականության ձևավորմամբ: Այդ փուլում Կատարը, հենվելով միջնորդական դիվանագիտության, տեղեկատվական ազդեցության, ոչ պետական դերակատարների հետ համագործակցության և ներդրումային քաղաքականության վրա, զգալիորեն ընդլայնեց իր տարածաշրջանային դերակատարումն ու ազդեցությունը: Երրորդ փուլը (2011-2021 թթ.) բնութագրվում էր «արաբական գարնան», դրան հաջորդած տարածաշրջանային ցնցումների և 2017 թ. դիվանագիտական ճգնաժամի պայմաններում արտաքին քաղաքականության վերափոխմամբ: Այս փուլում Կատարը վերանայեց իր ազդեցության գործիքները՝

միջնորդությանը զուգահեռ վարելով ակտիվ միջամտողական քաղաքականություն: Դիվանագիտական ճգնաժամը (2017-2021 թթ.) դարձավ փորձաքար Կատարի արտաքին քաղաքականության կենսունակության համար: Այն ի ցույց դրեց արտաքին քաղաքական ինքնուրույնությունը պահպանելու, Սաուդյան Արաբիայի ու դաշնակիցների ճնշմանը դիմակայելու, ինչպես նաև փոփոխվող աշխարհաքաղաքական իրողություններին հարմարվելու Դոհայի կարողությունը:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության հիմնական խնդիրներն ու առաջնահերթությունները պատմական տարբեր փուլերում կենտրոնացած են եղել ինքնիշխանության, ազգային անվտանգության ամրապնդման և արաբական աշխարհում քաղաքական դիրքերի ու դերակատարության հաստատման շուրջ, ինչը, որոշ դեպքերում, ուղեկցվել է արաբական երկրների ներքաղաքական գործընթացներին միջամտելով կամ ներազդելով: Մյուս կողմից, տվյալ ուղղության վերափոխումները մեծապես պայմանավորված են եղել տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացներով, հակամարտություններով և ճգնաժամային իրավիճակներով:

Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության մեջ հատուկ նշանակություն ուներ պաղեստինյան հիմնախնդիրը, որը Դոհան դիտարկում էր ոչ միայն որպես համաարաբական օրակարգի կարևորագույն մաս, այլև՝ արտաքին քաղաքական ազդեցության ռազմավարական հարթակ, որտեղ Կատարը, «խորշի դիվանագիտության» և «նուրբ ուժի» գործիքների միջոցով, ձգտում էր ամրապնդել իր տեղն ու դերը արաբական աշխարհում և անդին:

Հետազոտությունը հիմնավորում է, որ Կատարի արաբական քաղաքականության առջև ծառացած հիմնահարցերին արձագանքելու նպատակով Դոհան ձևավորել է փոխկապակցված արտաքին քաղաքական գործիքակազմ, որի առանցքային բաղադրիչներն էին տեղեկատվական դիվանագիտությունը, ոչ պետական դերակատարների ներգրավման մեխանիզմները, մարդասիրական և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև միջնորդական առաքելությունները: Դոհայի միջնորդական նախաձեռնությունները, որոնք, շատ դեպքերում, շրջանցել են տարածաշրջանային հիմնական դերակատարներին, այդ թվում՝ Սաուդյան Արաբիային և Եգիպտոսին, հիմնականում չեն հանգեցրել հակամարտությունների վերջնական կարգավորմանը, սակայն նպաստել են լարվածության նվազեցմանը, քաղաքական երկխոսության պահպանմանը՝ միաժամանակ բարձրացնելով Կատարի միջազգային հեղինակությունը:

Կատարի միջազգային հեղինակության բարձրացման և տարածաշրջանային ազդեցության ամրապնդման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցավ «Ալ Ջազիրան»՝ հատկապես «արաբական գարնան» ժամանակաշրջանում, երբ այն լրատվական հարթակից վերածվեց Կատարի տեղեկատվական դիվանագիտության և արտաքին քաղաքական ազդեցության կարևոր գործիքի՝ նպաստելով երկրի արտաքին քաղաքական կերպարի բյուրեղացմանը և Դոհայի քաղաքական օրակարգի տարածմանը:

Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղության մեջ առանձնանում է «քաղաքական իսլամի» գործիքայնացումը: Կատարի համագործակցությունը «քաղաքական իսլամին» հարող դերակատարների հետ ոչ թե գաղափարական նույնականացման դրսևորում էր, այլ՝ տարածաշրջանային և միջազգային գործընթացների վրա ազդեցության գործադրման, ինչպես նաև՝ Կատարի տարածաշրջանային դերակատարության ընդլայնման ռազմավարական միջոց: Կատարը, պահպանելով համագործակցային հարաբերություններ ինչպես «քաղաքական իսլամի» ներկայացուցիչների, այնպես էլ՝ նրանց հակադրվող արաբական պետությունների հետ, կարողացավ զուգակցել տարբեր քաղաքական դիրքորոշումներ ունեցող դերակատարների հետ հարաբերությունների զարգացումը և նրանց միջև ներկայանալ որպես միջին օղակ՝ ծառայեցնելով միջնորդի դերային ինքնությունը պետության ազգային շահերին:

Ընդհանուր առմամբ, հետազոտությունը փաստում է, որ Կատարի արտաքին քաղաքականության գործիքակազմի արդյունավետությունը պայմանավորված էր ոչ թե առանձին գործիքների կիրառմամբ, այլ դրանց ճկուն, փոխլրացնող և համակարգված օգտագործմամբ, որը պատմական տարբեր փուլերում հարմարեցվում էր ինչպես Կատարի արտաքին քաղաքական առաջնահերթություններին, այնպես էլ՝ առանձին երկրներում դրանց քաղաքական առանձնահատկություններին և տարածաշրջանային քաղաքական միջավայրի փոփոխություններին:

Ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ 1971-2021 թթ. Կատարի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը ձևավորվել և զարգացել է որպես պատմական շարունակականություն և ներքին տրամաբանություն ունեցող ամբողջական համակարգ: Հետևաբար՝ Կատարի արտաքին քաղաքականության պատմությունը հնարավոր չէ լիարժեք բացատրել առանց արաբական ուղղության կամ դրա առանձին գործիքների մեկուսացված ուսումնասիրությամբ, քանի որ դրանց նշանակությունը բացահայտվում է միայն փոխազդեցության համատեքստում: Ատենախոսությունը

պնդում է, որ արաբական ուղղությունը ոչ թե պարզապես աշխարհագրական ուղղություն է, այլ՝ Կատարի արտաքին քաղաքականության համակարգաստեղծ առանցք, որի շուրջ պատմականորեն ձևավորվել և զարգացել են արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, ռազմավարական գործընկերությունները, ազդեցության գործիքներն ու ոչ պետական դերակատարների ներգրավման մեխանիզմները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Սարգսյան Ք., Կատարի արտաքին քաղաքականությունն ու «Արաբական գարունը», Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, 2019, XIV, էջ 294-319:
2. Սարգսյան Ք., Իսլամական գործոնը Կատարի արտաքին քաղաքականությունում, Գիտական Արցախ, 2021, 2(9), էջ 149-162:
3. Սարգսյան Ք., Կատարի դերի կերպափոխումները ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2024, 1 (670), էջ 106-118.
4. Sargsyan K., The Palestinian Policy of Qatar (1995-2013), Herald of Social Sciences, 2024, 2 (671), pp. 182-198.
5. Sargsyan K., Between Blocs and Blockades: Qatar's diplomatic dilemma and strategic maneuvers, Contemporary Eurasia, 2024, XIII (1), pp. 44-63.
6. Sargsyan K., Major Geopolitical Changes in Persian Gulf: The Rise of China, Herald of Social Sciences, 2024, 3 (672), pp. 105-120.
7. Sargsyan K., The Role of Mediation Missions in Qatar's Foreign Policy, Herald of Social Sciences, 2025, 3 (675), pp. 86-97.
8. Sargsyan K., Qatar's Foreign Policy in the Maghreb and Its Role in Tunisia's Post-Revolutionary Transition (2011-2016), Herald of Social Sciences, 2026, 2 (677), pp. 123-133.

САРГСЯН КНАРИК АРУТЮНОВНА

КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ АРАБСКОГО НАПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ КАТАРА (С 1970-Х ПО 2021 ГОДЫ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».

Защита состоится 18 сентября 2026 года в 14:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА действующего при Институте Востоковедения (0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Со второй половины XX века структурные изменения на Ближнем Востоке, включая развитие нефтяной промышленности, процессы деколонизации и институциональное становление новых независимых государств, существенно изменили характер региональной политики и способствовали возрастанию роли малых государств Персидского залива. В данном контексте особый научный интерес представляет Катар, который после обретения независимости в 1971 г. постепенно сформировал многокомпонентную внешнюю политику, сочетавшую посредническую и публичную дипломатию, экономическую и гуманитарную помощь, информационное воздействие и другие внешнеполитические инструменты.

Новый уровень активности внешняя политика Катара приобрела в период «арабской весны» и после нее. Доха перешла к более инициативной, а в отдельных случаях и интервенционистской политике в отношении политических преобразований в арабском мире. С одной стороны, данная политика способствовала расширению региональной и международной роли Катара, с другой формированию политической среды, которая в конечном итоге привела к дипломатическому кризису 2017-2021 гг., ставшему серьезным вызовом суверенитету страны и самостоятельности ее внешней политики.

Хронологические рамки исследования охватывают 1971-2021 гг., от провозглашения независимости Катара до преодоления дипломатического кризиса. Для раскрытия исторических истоков арабского направления внешней политики Катара в исследовании также рассматривается период, предшествовавший обретению независимости, в частности укрепление власти династии Аль Тани, становление Катара как самостоятельной политической единицы и историко-

политические процессы, предшествовавшие формированию независимой государственности.

Во введении обосновывается актуальность темы исследования, определяются его цель и задачи, хронологические рамки, методологические, теоретические и концептуальные основы, научная новизна, источниковая база и практическая значимость.

В первой главе исследуются теоретические, исторические и политические основы формирования арабского направления внешней политики Катара.

Во второй главе анализируется переход Катара к большей внешнеполитической самостоятельности. Особое внимание уделяется постепенному дистанцированию от влияния Саудовской Аравии, стратегическому сотрудничеству с США, становлению телеканала «Аль Джазира» как инструмента информационного влияния и возрастанию значения палестинского вопроса. Рассматриваются также начальный этап проникновения политического ислама и предпосылки его последующего включения во внешнеполитический инструментарий Катара.

В третьей главе показано, как посредничество стало одним из ключевых инструментов региональной политики Катара. Посреднические инициативы анализируются с точки зрения их мотивов, особенностей, эффективности и ограничений. Рассматривается также дальнейшее развитие палестинской политики Катара и его участие во внутрипалестинском диалоге и процессах примирения.

В четвертой главе исследуется трансформация арабского направления внешней политики Катара в период «арабской весны» и после нее, когда посредническая деятельность стала сочетаться с более инициативными, а в отдельных случаях интервенционистскими инструментами. Политика Катара в Египте, Йемене, Ливии, Тунисе, Сирии и Бахрейне раскрывает различные формы и ограничения такого вовлечения. Рассматривается также внешняя политика Катара в период правления шейха Тамима бин Хамада Аль Тани, а дипломатический кризис 2017-2021 гг. анализируется как важнейшее испытание жизнеспособности внешнеполитической модели страны.

В заключении обобщаются основные этапы и результаты исследования.

Исследование показывает, что в 1971-2021 гг. арабское направление внешней политики Катара развивалось как целостная система, обладающая исторической преемственностью и собственной внутренней логикой. Эволюция от осторожной интеграции в региональную систему к активной посреднической политике, а затем к сочетанию посредничества с более интервенционистскими

инструментами отражает расширение внешнеполитической роли Катара за пределы традиционных ограничений малого государства. В связи с этим арабское направление рассматривается как системообразующая ось внешней политики Катара, вокруг которой формировались и развивались его региональная роль, стратегические партнерства, инструменты влияния и внешнеполитическая самостоятельность.

Диссертацию завершает библиография использованных источников и научной литературы.

SARGSYAN KNARIK

KEY ISSUES OF THE ARAB DIRECTION OF QATAR'S FOREIGN POLICY (FROM THE 1970S TO 2021)

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences in specialty 07.00.02 "World History".

The defense will take place on September 18, 2026, at 2:00 PM at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

Since the second half of the twentieth century, structural transformations in the Middle East, including the development of the oil industry, decolonization, and the consolidation of newly independent states, have reshaped regional politics and contributed to the growing role of the small states of the Persian Gulf. In this context, Qatar represents a particularly significant case. Following its independence in 1971, Qatar gradually developed a multidimensional foreign policy that combined mediation and public diplomacy, economic and humanitarian assistance, informational influence, and other instruments.

Qatar's foreign policy acquired a new level of activism during and after the Arab Spring. Doha adopted a more proactive and, in certain cases, interventionist approach to political transformations across the Arab world. While this policy expanded Qatar's regional and international role, it also contributed to the political environment that culminated in the 2017-2021 diplomatic crisis, becoming a serious challenge to the country's sovereignty and foreign policy autonomy.

The dissertation covers the period from 1971 to 2021, from Qatar's independence to the resolution of the diplomatic crisis. It also addresses the period preceding independence, particularly the consolidation of Al Thani rule, Qatar's emergence as a distinct political entity, and the historical and political processes that preceded independent statehood.

The Introduction presents the relevance, purpose, and objectives of the research; its chronological framework; and its methodological, theoretical, and conceptual foundations, scientific novelty, source base, and practical significance.

The first chapter examines the theoretical, historical, and political foundations of Qatar's Arab foreign policy direction.

The second chapter analyzes Qatar's transition toward greater foreign policy autonomy, focusing on its gradual distancing from Saudi influence, strategic cooperation with the United States, the emergence of Al Jazeera as an instrument of information influence, and the growing importance of the Palestinian question. It also examines the initial penetration of political Islam and the preconditions for its incorporation into Qatar's foreign policy toolkit.

The third chapter demonstrates how mediation became a central instrument of Qatar's regional policy. Qatari mediation policy is analyzed in terms of its motives, distinctive features, effectiveness, and limitations, while the chapter also examines the further development of Qatar's Palestinian policy and its involvement in intra-Palestinian dialogue and reconciliation.

The fourth chapter examines the transformation of Qatar's Arab policy during and after the Arab Spring, when mediation was increasingly accompanied by proactive and, in certain cases, interventionist instruments. Qatar's policies toward Egypt, Yemen, Libya, Tunisia, Syria, and Bahrain reveal differentiated forms and limitations of this engagement. The chapter also examines Qatar's foreign policy under Sheikh Tamim bin Hamad Al Thani and analyzes the 2017-2021 diplomatic crisis as a critical test of its resilience.

The Conclusion summarizes the major stages and key findings of the research.

The research demonstrates that between 1971 and 2021, the Arab direction of Qatar's foreign policy evolved as an integrated system characterized by historical continuity and its own internal logic. Its transformation from cautious regional integration to mediation activism, and subsequently to combining mediation with more interventionist instruments, reflects the expansion of Qatar's foreign policy role beyond the conventional constraints of a small state. The Arab direction is therefore conceptualized as the system-forming axis of Qatar's foreign policy, around which its regional role, strategic partnerships, instruments of influence, and foreign policy autonomy evolved.

The dissertation is followed by a bibliography of the sources and scholarly literature used in the study.